10 Էրազմուս+ հարց ու պատասխան

ուսանողների և երիտասարդների համար

Հայաստանում
Էրազմուս+
ազգային գրասենյակ

2022թ., ք.Երևան

Ինչպե՞ս կարող եմ սովորել Եվրոպայում Եվրամիության աջակցությամբ

Ցանկանում ես սովորել արտերկրում, բայց քեզ մտահոգում են ուսման հետ կապված մեծ ծախսերը, օտար լեզվի իմացության պահանջները, դիմումի բարդ ընթացակարգե՞րը: Մտահոգվելու կարիք չկա. Էրազմուս+ ծրագիրը ֆինանսական աջակցություն է տրամադրում երիտասարդներին՝ արտերկրում կարճաժամկետ և երկարաժամկետ ուսում ստանալու, միջազգային երիտասարդական միջոցառումներին մասնակցելու և նույնիսկ պրակտիկա անցնելու ուղղությամբ:

Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակը պատրաստել է հաճախակի տրվող 10 հարց և պատասխան, որոնք հայ երիտասարդներին կօգնեն հեշտությամբ ընկալել Էրազմուս+ ծրագրի առաջարկների յուրահատկությունները և կաջակցեն դիմելու գործընթացում:

Մեր նպատակն է հնարավորինս պարզ և հստակ տեղեկատվության միջոցով ուղղորդել պոտենցիալ դիմորդին, ինչպես նաև տրամարդված հղումների ու կոնտակտների միջոցով աջակցել ծրագրի մասին լիարժեք տեղեկատվության տարածմանը:

1 Ցանկանում եմ սովորել Եվրոպայում, բայց դրամական միջոցներ չունեմ: Կարո՞ղ է Էրազմուս+ ծրագիրն ինձ աջակցել:

Այո՛, կարող է: Այս ծրագրի միջոցով ԵՄ-ն առաջարկում է ուսանողական փոխանակումներ (Միջազգային կրեդիտային շարժունություն) եվրոպական բուհերում բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի կրթական մակարդակներում: Փոխանակումները կազմում են Ձեր ուսումնական ծրագրի մի մասը և կարող են տևել 2-ից 12 ամիս: Կրթաթոշակը կհոգա Ձեր ճամփորդական և կեցության ծախսերը:

Եթե Դուք այլևս ուսանող չեք և ցանկանում եք շարունակել ուսումը արտերկրում, ապա կարող եք դիմել Էրազմուս Մունդուս ամբողջական կրթաթոշակների՝ երկու և ավելի առաջատար եվրոպական բուհերում մագիստրոսի աստիճան ձեռք բերելու և կրկնակի կամ համատեղ դիպլոմ ստանալու նպատակով:

2 Կարծես թե Էրազմուս+-ը հենց ինձ համար է, բայց ինչպե՞ս կարող եմ դիմել:

Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերին մասնակցելու համար այցելեք Ձեր համալսարանի Միջազգային կապերի գրասենյակ, որտեղ կտեղեկացնեն, թե Ձեր մասնագիտության շրջանակներում ինչ առաջարկներ կան և կօգնեն դիմում ներկայացնել: Հետևեք նաև Էրազմուս+ շարժունության հնարավորությունների մասին հայտարարություններին Ձեր համալսարանի կայքում և սոցիալական էջերում:

Էրազմուս Մունդուս ամբողջական կրթաթոշակի համար անհրաժեշտ է ուսումնասիրել համատեղ մագիստրոսական ծրագրերի շտեմարանը, որը տրամադրում է առաջիկա ուսումնական տարում կրթաթոշակներ առաջարկող դասընթացների ցանկը: Այնուհետև, հարկավոր է այցելել ընտրված մագիստրոսական ծրագրի կայքը՝ վերջնաժամկետը ստուգելու, պահանջներին ծանոթանալու և դիմելու նպատակով: Բոլոր ծրագրերը պահանջում են դիմումները ներկայացնել յուրաքանչյուր տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր և հունվար-փետրվար ամիսների միջև ընկած ժամանակահատվածում:
Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակը կօգնի Ձեզ ստանալ բոլոր լրացուցիչ հարցերի պատասխանները: Մանրամասների համար կարող եք ուսումնասիրել մեր կայքի (**www.erasmusplus.am**) «Կրթաթոշակներ» մենյուն և այնուհետև Ձեր հարցերն ուղարկել **program@erasmusplus.am** կամ **info@erasmusplus.am** էլեկտրոնային հասցեներին:

3 Կարո՞ղ եմ մասնակցել Էրազմուս+ փոխանակմանը, եթե իմ համալսարանը արտասահմանյան համալսարանի հետ համաձայնագիր չունի:

Առանց երկու համալսարանների միջև միջինստիտուցիոնալ համաձայնագրի Դուք չեք կարող մասնակցել Էրազմուս+ փոխանակմանը: Այնուամենայնիվ, եթե արդեն ունեք բակալավրի դիպլոմ, կարող եք դիմել Էրազմուս Մունդուս համատեղ մագիստրոսական ծրագրերին: Պահանջների, ժամանակացույցի և դիմելու ընթացակարգի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել մեր կայք (տեսեք կետ 2-ը):

4 Իսկ օտար լեզուների իմացության հետ կապված ինչպիսի՞ պահանջներ կան: Արդյո՞ք ես ունեմ անգլերենի իմացությունը հաստատող վկայագրի կարիք:

Հիշեք, որ Էրազմուս+-ին մասնակցելը նշանակում է, որ Դուք պետք է կարողանաք ուսուցման լեզվով հետևել դասախոսություններին, պատրաստել գրավոր աշխատանքներ և քննություններ հանձնել: Շատ հաճախ ուսուցման լեզուն անգլերենն է:

Փոխանակման դեպքում դա կախված է ուսումնառության երկրից և դասավանդման լեզվից: Որոշ փոխանակումներ առաջարկում են դասընթացներ անգլերենով, իսկ մյուսները՝ տեղական լեզուներով: Եթե չունեք դասավանդվող լեզվի որակավորում, ապա այդ լեզվի մակարդակը գնահատելու համար Ձեզանից կպահանջվի քննություն հանձնել: Մինչ մեկնելը փոխանակմանը մասնակցող բոլոր ուսանողներն իրենց համալսարաններում հանձնում են անգլերեն լեզվի իմացության գնահատման թեստ:

Անգլերեն լեզվի միջազգային վկայագիրը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է Էրազմուս Մունդուս կրթաթոշակներին դիմելիս: TOEFL iBT-ն կամ IELTS-ը ամենատարածված լեզուների գնահատման թեստեր են, որոնք պետք է հանձնել դիմումի վերջնաժամկետից առաջ:

5 Որքա՞ն կրթաթոշակ կարող եմ ստանալ:

Ուսանողական փոխանակումների համար ԵՄ-ն տրամադրում է մինչև 820 եվրո ճամփորդական և 800, 850 կամ 900 եվրո կեցության ծախսերը հոգալու համար:

Մագիստրոսական ծրագրերի դեպքում Էրազմուս Մունդուս կրթաթոշակը կհոգա Ձեր բոլոր ծախսերը (ներառյալ ուսման վարձը, գրադարանային և լաբորատոր ծախսերն ու ամբողջական ապահովագրությունը): Այն նաև կփոխհատուցի Ձեր ճամփորդական և նոր երկրում հիմնվելու ծախսերը բացի այդ՝ կտրամադրի ամենամյա նպաստ ուսումնական ծրագրի ողջ տևողության ընթացքում:

6 Որպես ուսանող կարո՞ղ եմ մի քանի անգամ մասնակցել Էրազմուս+ փոխանակումների:

Էրազմուս+-ը ուսանողներին հնարավորություն է տալիս ավելի քան մեկ անգամ սովորել արտերկրում, քանի դեռ փոխանակման առավելագույն տևողության սահմանը (12 ամիս) չի գերազանցվել յուրաքանչյուր կրթական մակարդակի համար: Այնուամենայնիվ, հայկական բուհերի համար խրախուսելի է փոխանակման հնարավորություններ ընձեռել այն ուսանողներին, որոնք դեռևս չեն օգտվել շարժունությունից:

7 Ես Հայաստանի Հանրապետության քաղաքացի չեմ. կարո՞ղ եմ օգտվել Էրազմուս+ կրթաթոշակներից:

Միջազգային կրեդիտային շարժունության դեպքում, անկախ քաղաքացիությունից կամ ազգությունից, ցանկացած ուսանող (տեղացի կամ միջազգային), ով գրանցված է հայաստանյան բուհում, իրավասու է դիմել Էրազմուս+ փոխանակման ծրագրերին: Այնուամենայնիվ, կախված բուհի որդեգրած քաղաքականությունից, համալսարանը կարող է նախընտրել առաջնահերթությունը տալ տեղացի ուսանողներին:

Էրազմուս Մունդուսի կրթաթոշակների դեպքում դիմորդները, ովքեր նախորդ 5 տարիների ընթացքում 12 ամսից ավել ապրել կամ սովորել են ԵՄ 27 անդամ պետություններից և 6 ոչ ԵՄ երկրներից (Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն, Իսլանդիա, Լիխտենշտեյն, Նորվեգիա, Սերբիա և Թուրքիա) որևիցե մեկում, համարվում են վերոնշյալ երկրների դիմորդներ, ինչի պարագայում տրամադրվող կրթաթոշակի չափը զգալիորեն նվազում է:

8 Որո՞նք են Էրազմուս+-ի առավելությունները:

Բազմաթիվ միջազգային ուսումնասիրություններ ցույց են տվել, որ արտերկրում սովորելը կարող է մեծապես նպաստել անձնային և մասնագիտական զարգացմանը: Էրազմուս+ փոխանակման ծրագրերի մասնակիցները գնահատվում են իրենց միջանձնային կամ համընդհանուր հմտությունների շնորհիվ, այն է՝ ինքնակարգապահություն, օտար լեզվով սովորելու ունակություն, բազմազանության հանդեպ հարգանք, ճկունություն և այլն: Բայց, որն ամենակարևորն է, նրանք բազմաթիվ ընկերներ և նոր մասնագիտական հեռանկարներ են ձեռք բերում:

Էրազմուս Մունդուսի շրջանավարտները լավ վարձատրվող աշխատանք գտնելու, ավելի պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու և սեփական կազմակերպություն հիմնելու ավելի մեծ հնարավորություններ ունեն:

9 Կարո՞ղ եմ Էրազմուս+-ով պրակտիկա անցնել արտերկրում:

Այո՛, պրակտիկա անցնելու համար Դուք պետք է գրանցված լինեք որպես բակալավրիատի, մագիստրատուրայի կամ ասպիրանտուրայի ուսանող: Ինչպես փոխանակման դեպքում, մայր բուհը պետք է ունենա Ձեր կրթական կարիքներին համապատասխան պրակտիկայի առաջարկներ: Այդ հնարավորությունների առկայությունը ճշտեք Ձեր համալսարանում: Այցելեք Ձեր բուհի Միջազգային կապերի գրասենյակ, որտեղ կտեղեկանաք, թե ինչ առաջարկներ կան Ձեր մասնագիտության շրջանակներում և ինչպես կարելի է դիմում ներկայացնել:

10 Արդյոք կա՞ն Էրազմուս+ ուսանողներին և երիտասարդներին աջակցելու այլ հնարավորություններ:

Այո, կան: Էրազմուսը+-ը թե՛ ուսանողների և թե՛ ոչ ուսանող երիտասարդների ու երիտասարդական ոլորտի աշխատողների համար է: Էրազմուս ուսանողների ցանցի (ESN) հայաստանյան ներկայացուցչությունը տրամադրում է տեղեկատվություն և աջակցում է Էրազմուս+ ակադեմիական փոխանակումներին մասնակցող հայ և օտարերկրյա ուսանողներին իրենց շարժունության ընթացքում: Հետևեք և կապ հաստատեք ESN Հայաստան թիմի հետ esnyerevan@gmail.com էլ. հացեով և սոցիալական մեդիաներում esnyerevan, esn.yerevan: Իսկ 13+ տարիքի երիտասարդների համար հնարավորությունների մասին պաշտոնական տեղեկատվություն է տրամադրում Հայաստանում Erasmus+ Youth Տեղեկատվական կենտրոնը, որի հետ կարող եք կապ հաստատել հետևյալ միջոցներով՝ EP.Armenia, +374 94 525254, info.armenia@salto-youth.net:

Co-funded by the European Union

Սույն գրքույկն արտացոլում է միայն այն հեղինակած կազմակերպության տեսակետները և որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության պաշտոնական կարծիքը: Եվրոպական հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում հրատարակության բովանդակության և օգտագործված աղբյուրների համար:

Հայաստանում Էրազմուս+ ազգային գրասենյակ
Հայաստան, ք.Երևան 0037, Կ.Ուլնեցի փ. 31/3
+374 91 21 62 58
info@erasmusplus.am
program@erasmusplus.am
erasmusplus.am
neoarm
@ErasmusArmenia